Պատասխան- -Համայնքի բյուջեի ձևավորման հիմնական աղբյուրներն են՝ պաշտոնական տրանսֆերտները, սեփական եկամուտները և պակասուրդի ֆինանսավորման նպատակով ներգրաված միջոցները։
Սեփական եկամուտներ՝
-Ընթացիկ եկամուտներ,
-Հարկային եկամուտներ ՝

հողի հարկ՝ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար,
գույքահարկ՝ համայնքի վարչական տարածքում գտնվող գույքի համար,
եկամտային հարկից մասհանումներ,
շահութահարկից մասհանումներ,
բնապահպանական վճարներից մասհանումներ,
հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ։
Եկամտային հարկի, շահութահարկի և բնապահպանական վճարների գումարներից համայնքների բյուջեներ կատարվող մասհանումների տոկոսաչափերը սահմանվում են յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով։
-Տուրքեր՝
ա) տեղական տուրքեր
բ) պետական տուրքեր

-Պաշտոնական դրամաշնորհներ՝
ա) պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ,
բ) պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ,
գ) պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները՝ սուբվենցիաներ,
դ)այլ աղբյուրներից (հանրապետության այլ համայնքներ, միջազգային կազմակերպություններ, օտարերկրյա պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններ) ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ։
-Այլ եկամուտներ, այդ թվում՝
ա) համայնքի սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ,
բ) համայնքի սեփականություն համարվող հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից առաջացած եկամուտներ,
գ) վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման

մարմինների կիրառած պատժամիջոցներից առաջացած եկամուտներ,
դ) համայնքի սեփականություն համարվող ընկերությունների տրամադրության տակ մնացած շահույթից համայնքի ավագանու որոշումներով կատարվող մասհանումներ,
ե) տեղական վճարներ,
զ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով գանձվող և համայնքների բյուջեների եկամուտներին հաշվանցման ենթակա այլ տեղական վճարներ,
է) համայնքի սեփականություն համարվող, ինչպես նաև տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ֆիզիկական և իրավաբանական անձանցից նվիրատվության կարգով համայնքին որպես սեփականություն անցած հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից եկամուտներ,
ը) պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակած լիազորությունների իրականացման համար համայնքների բյուջեներից՝ ծախսերի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից տրամադրվող հատկացումներ,
թ) տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ պետության, հանրապետության այլ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների տեղական ինքնակառավարման մարմինների) նվիրատվության կարգով համայնքին որպես սեփականություն անցած դրամական միջոցներ:
Պակասուրդի ֆինանսավորման նպատակով ներգրավված միջոցներ՝
-Փոխառու միջոցներ
-Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից մուտքեր:
Համայնքի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է համայնքի ավագանին, որն իրավազոր է ստուգել ցանկացած բյուջետային գործողություն, աշխատանքների կատարման արդյունավետությունը և որակը, պահանջել հաշվետվություններ՝ կատարված ծախսերի վերաբերյալ:
Բյուջեի կատարման վերահսկողությունը մշտապես և արդյունավետ իրականացնելու նպատակով համայնքների ավագանիները կարող են սահմանված կարգով ներգրավել աուդիտորական ծառայություններ, որոնց դիմաց վճարումը կատարվում է համայնքային բյուջեից: